



ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

26.01.2018թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/02

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ)՝ քննելով «Թեոֆարմա» ՍՊԸ-ի 09.01.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2018/02 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «Թեոֆարմա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Թեոֆարմա» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 09.01.2018թ. Խորհրդին ներկայացրած բողոքով հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար «Դեղորայքի» ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ 9/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ «այսուհետ՝ Ընթացակարգ», որին մասնակցելու նպատակով «Թեոֆարմա» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել Ընթացակարգի թիվ 9-րդ և 20-րդ չափաբաժինների մասով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.11.2017թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 4.1 կետով և նրան կից Հավելված 1-ով Ընկերությունը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից թիվ 20-րդ չափաբաժնի մասով:

07.12.2017թ. «Թեոֆարմա» ՍՊԸ-ն ծանուցվել է այդ մասին և սահմանված կարգով 08.12.2017թ. ներկայացրել է անհրաժեշտ փաստաթղթերը, որտեղ ներառված են եղել գնման առարկա հանդիսացող «Իզոֆլուրան» անվանումով, 100 մլ ծավալ ունեցող շնչառման

հեղուկի նկարագիր համաձայն՝ «Իզոֆլուրան» ակտիվ բաղադրատարրը պարունակող, 100մլ տարողությամբ և ՀՀ «Դեղերի գրանցման Պետական գրանցամատյան»-ում առկա և ՄԻԱԿ՝ որպես ապրանքային նշան <Անեստերան> անվանումը ունեցող պրեպարատի գրանցված տվյալները, ինչպես նաև ՀՀ-ում 100մլ ծավալով, «Իզոֆլուրան» ակտիվ բաղադրատարրը պարունակող, Ռումինիայի «Ռոմֆարմ» ֆիրմայի արտադրության՝ «Անեստերան» անվանումով պրեպարատի գրանցված տուփի մակետները և ներկրված պրեպարատի տուփի օրինակը, որտեղ և արտադրողի, և ՀՀ գրանցող մարմնի կողմից ֆիքսված են 99.9% թվերը, ընդհանրապես ոչ մի պաշտոնական փաստաթղթում ոչ մի նշում չկա 100% թվի մասին, ինչպես նշված է Ընթացակարգի հրավերի թիվ 20-րդ չափաբաժնում:

Նման ձևով կազմելով Ընթացակարգի թիվ 20-րդ չափաբաժնի գնման առարկայի բնութագիրը՝ Պատվիրատուն գնումների գործընթացում թույլ է տվել մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացում, ինչը հակասում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով սահմանված պահանջին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.12.2017թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ Ընկերության կողմից ներկայացվածները համարվել են որպես հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող, որից հետո 22.12.2017թ. ծանուցումով Ընկերությունից պահանջվել է շտկումներ, սակայն Ընկերությունը չի պատասխանել այդ ծանուցմամբ պահանջվող շտկումներին ելնելով հետևյալ նկատառումներից՝

ա. Պատվիրատուի նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետով Ընկերությանը վերաբերվող ձևակերպումների թիվ 1 նշումում, որպես անհամապատասխանության հիմնավորում գրված 100% թիվը հիմնազուրկ է չի համապատասխանում ՀՀ-ում պաշտոնապես գրանցված ՄԻԱԿ՝ 99.9 թվին, որը գրանցված է և գործում է 2013թ-ի փետրվարի 1-ից մինչ օրս և այդ ընթացքում փոփոխության չի ենթարկվել: Ընկերությունը դա համարել է որպես վրիպակ Պատվիրատուի կողմից, ուստի չի անդրադարձել անգամ այդ թվերի պարզաբանումների հարցումներով:

Պատվիրատուի նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետով Ընկերությանը վերաբերվող ձևակերպումների թիվ նշումում տեխնիկական բնութագիր <Ծանոթություն> մասով սահմանված դրույթները հավելված 6.1-ի սահմանումներին, որտեղ նման պահանջներ ընդհանրապես գոյություն չունեն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.12.2017թ.-ի նիստի թիվ 5 արձանագրության 1.2 կետի համաձայն՝ ֆիքսվել է Ընկերության կողմից սահմանված ժամկետում շտկումներ չներկայացնելու փաստերը և մերժել է Ընկերության հայտը թիվ 20-րդ չափաբաժնի մասով, իսկ նույն արձանագրության 1.3 կետով հրավերի թիվ 20-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել <Վազա Ֆարմ> ՍՊԸ-ն:

Ընկերությունը, Խորհրդին ներկայացված բողոքով խնդրել է պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին փոփոխելու նիստի թիվ 5 արձանագրության 1.2 և 1.3 կետերով ընդունված որոշումները՝ թիվ 20-րդ չափաբաժնի մասով, և ընդունել որոշում Ընկերությանը ընտրված մասնակից ճանաչելու մասին՝ հրավերի թիվ 20-րդ չափաբաժնի մասով:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 12.01.2018թ. ժամը 11:30-ի նիստի վերաբերյալ, տնօրենը ապահովել է իր մասնակցությունը, ով պնդել է բողոքով Խորհրդին հայտնած դիրքորոշում:

2. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները

ՀՀ պաշտպանության նախարարությունը Խորհրդին է ներկայացրել Ընթացակարգով պահանջվող փաստաթղթերը և 15.01.2018թ-ին թիվ ԴՎԱ/134 գրությամբ Խորհրդին հայտնել է, որ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտեր էին ներկայացրել թվով 13 մասնակիցներ, այդ թվում՝ «Թեոֆարմա» ՍՊԸ-ն:

Ընկերությունը գնահատող հանձնաժողովի կողմից առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել Ընթացակարգի թիվ 20-րդ չափաբաժնի մասով: Ընկերության կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերի գնահատման արդյունքում արձանագրվել է, որ փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 47-րդ կետը՝ հանձնաժողովը 22.12.2017թ.-ին կայացած նիստում որոշեց առաջարկել

Ընկերությանը սահմանված ժամկետում շտկել առկա անհամապատասխանությունները, սակայն Ընկերության կողմից անհամապատասխանությունները չեն շտկվել:

Հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը՝ հանձնաժողովը որոշել է Ընկերության ներկայացրած փաստաթղթերը գնահատել հրավերի պահանջներին ոչ համապատասխան և վերջինիս հայտը մերժել:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 12.01.2018թ. ժամը 11:30-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է վերոհիշյալ գրությամբ հայտնած դիրքորոշումը:

3. ԳԲԽ-ԱՄ-2018/02 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԱՄ-2018/02 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար «Դեղորայքի» ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ 9/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով «Թեոֆարմա» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել Ընթացակարգի թիվ 9-րդ և 20-րդ չափաբաժինների մասով:

2. Ընթացակարգի հրավերի պայմանագրին կից Հավելված 1-ով՝ Տեխնիկական բնութագրով, թիվ 20-րդ չափաբաժնի համար սահմանվել է՝ Իզոֆլուրան n01ab06, հեղուկ շնչառման, 100%, 100մլ ապակե շշիկ:

3. Տեխնիկական բնութագրի ներքևի հատվածում նշված է հետևյալը՝

Ծանոթություն.

- Դեղամիջոցների մնացորդային պիտանելիության ժամկետները հանձման պահին պետք է համապատասխանեն ՀՀ կառավարության 02.05. 2013թ. թիվ 502-Ն որոշման 7-րդ կետի պահանջներին, մասնավորապես 2,5 տարի և ավելի պիտանելիության ժամկետ ունեցող դեղերը հանձնման պահին պետք է ունենան առնվազն 2 տարի մնացորդային ժամկետ /ա ենթակետ/, իսկ մինչև 2,5 տարի պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքերը՝ առնվազան պիտանելիության ժամկետի 2/3-ը /բ ենթակետ/:

- Մատակարարման ժամանակ անհրաժեշտ է ներկայացնել մատակարարված ապրանքատեսակների խմբաքանակի որակի սերտիֆիկատ:

- Մասնակցի առաջարկում դեղաձևի թողարկման ձևը (փաթեթավորումը) կարող է ներկայացվել ՀՀ գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ոեեստր) առկա տվյալ դեղաձևի ցանկացած փաթեթավորմամբ /հիմք՝ ՀՀ կառավարության 02.05.2013թ. թիվ 502-Ն որոշմամբ հաստատված չափորոշիչների 3-րդ կետի 1) ենթակետ:

- Մատակարարման վայրը՝ ՀՀ ՊՆ 73014 զորամաս (ք. Աբովյան):

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.11.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 4.1 կետով կայացված որոշմամբ Հավելված 1-ի համաձայն՝ «Թեոֆարմա» ՍՊԸ-ն Ընթացակարգի թիվ 20-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից

5. Նույն արձանագրության 4-րդ կետի 4.2 ենթակետով որոշվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնելու Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.12.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետի 1.1 ենթակետով արձանագրվել է, որ «Թեոֆարմա» ՍՊԸ-ի կողմից 20-րդ չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքը չի համապատասխանում Ընթացակարգի հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի, մասնակցի կողմից ամբողջական նկարագրում նշված է «Հեղուկ շնչառական, 99.9%, 100մլ ապակե շշիկ» այնինչ Ընթացակարգի հրավերով հստակ սահմանված է, որ պետք է լինի «Հեղուկ շնչառական, 100%, 100մլ ապակե շշիկ»: Մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում «Հավելված 6.1» ներառված չեն Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի «Ծանոթություն» մասով սահմանված հետևյալ դրույթները.

- Դեղամիջոցների մնացորդային պիտանելիության ժամկետները հանձման պահին պետք է համապատասխանեն ՀՀ կառավարության 02.05. 2013թ. թիվ 502-Ն որոշման 7-րդ կետի պահանջներին, մասնավորապես 2,5 տարի և ավելի պիտանելիության ժամկետ ունեցող դեղերը հանձնման պահին պետք է ունենան առնվազն 2 տարի մնացորդային ժամկետ /ա ենթակետ/, իսկ մինչև 2,5 տարի պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքերը՝ առնվազան պիտանելիության ժամկետի 2/3-ը /բ ենթակետ/:

- Մատակարարման ժամանակ անհրաժեշտ է ներկայացնել մատակարարված ապրանքատեսակների խմբաքանակի որակի սերտիֆիկատ:

7. Նույն արձանագրությամբ, հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետը, հանձնաժողովը 22.12.2017թ. ժամը 11:35-ին կայացած նիստում որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել մասնակիցներին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

8. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 26.12.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 5 արձանագրության 1-ին կետի 1.2 ենթակետով կայացված որոշմամբ, հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը, մերժել է «Թեոֆարմա» ՍՊԸ-ի հայտը, այն հիմնավորմամբ, որ վերջինիս կողմից սահմանված ժամկետում և կարգով չեն շտկվել առկա անհամապատասխանությունները:

4. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

«Ձ գնումների բողոքարկման խորհուրդ, ուսումնասիրելով «Թեոֆարմա» ՍՊԸ-ի 09.01.2018թ. ներկայացրած բողոքը՝ կից նյութերով, «Ղ պաշտպանության նախարարության 15.01.2018թ. թիվ ԴՎԱ/134 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» «Ղ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի և 6-րդ մասի համաձայն՝

5. Առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում՝

1) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

2) հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

6. Հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

«Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքային նշանն արտադրողի անվանումը, ծագման երկիրը, ապրանքի տեխնիկական բնութագրերը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):»

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ Առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

- 1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.
- 2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Այսպես, ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար դեղերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է գնանշման հարցման ընթացակարգ, որի Տեխնիկական բնութագրով, թիվ 20-րդ չափաբաժնի համար սահմանվել է՝ Իզոֆլուրան n01ab06, հեղուկ շնչառման, 100%, 100մլ ապակե շշիկ:

Իսկ Տեխնիկական բնութագրի ներքևի հատվածում նշված է հետևյալը՝

Ծանոթություն.

- Դեղամիջոցների մնացորդային պիտանելիության ժամկետները հանձման պահին պետք է համապատասխանեն ՀՀ կառավարության 02.05. 2013թ. թիվ 502-Ն որոշման 7-րդ կետի պահանջներին, մասնավորապես 2,5 տարի և ավելի պիտանելիության ժամկետ ունեցող դեղերը հանձնման պահին պետք է ունենան առնվազն 2 տարի մնացորդային ժամկետ /ա ենթակետ/, իսկ մինչև 2,5 տարի պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքերը՝ առնվազան պիտանելիության ժամկետի 2/3-ը /բ ենթակետ/:

- Մատակարարման ժամանակ անհրաժեշտ է ներկայացնել մատակարարված ապրանքատեսակների խմբաքանակի որակի սերտիֆիկատ:

- Մասնակցի առաջարկում դեղաձևի թողարկման ձևը (փաթեթավորումը) կարող է ներկայացվել ՀՀ գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ոեեստր) առկա տվյալ դեղաձևի ցանկացած փաթեթավորմամբ /հիմք՝ ՀՀ կառավարության 02.05.2013թ. թիվ 502-Ն որոշմամբ հաստատված չափորոշիչների 3-րդ կետի 1) ենթակետ:

- Մատակարարման վայրը՝ ՀՀ ՊՆ 73014 զորամաս (ք. Արուսյան):

Ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած «Թեոֆարմա» ՍՊԸ-ն հայտի թիվ 4 հավելվածով հայտարարել և հավաստում է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/1» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին:

Նույն հայտարարությամբ մասնակիցը պարտավորվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/1» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների)՝ անվանումը, ապրանքային նշանը, արտադրողը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 2-ի 3-րդ կետի 3.1 ենթակետով սահմանվել է, որ Ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովի քարտուղարի՝ սույն հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով, հանձնաժողովին է ներկայացնում սույն հրավերի 6-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում է իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 6.1-ի:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.11.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 4.1 կետով կայացված որոշմամբ Հավելված 1-ի համաձայն՝ «Թեոֆարմա» ՍՊԸ-ն Ընթացակարգի թիվ 20-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից, որին ծանուցվել է առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը ներկայացնելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.12.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետի 1.1 ենթակետով արձանագրվել է, որ «Թեոֆարմա» ՍՊԸ-ի կողմից 20-րդ չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքը չի համապատասխանում Ընթացակարգի հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին, մասնավորապես.

1. մասնակցի կողմից ամբողջական նկարագրում նշված է «Հեղուկ շնչառական, 99.9%, 100մլ ապակե շիկ» այնինչ՝ Ընթացակարգի հրավերով հստակ սահմանված է, որ պետք է լինի «Հեղուկ շնչառական, 100%, 100մլ ապակե շիկ»:

2. Մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում «Հավելված 6.1» ներառված չեն Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի «Ծանոթություն» մասով սահմանված հետևյալ դրույթները.

- Դեղամիջոցների մնացորդային պիտանելիության ժամկետները հանձման պահին պետք է համապատասխանեն ՀՀ կառավարության 02.05. 2013թ. թիվ 502-Ն որոշման 7-րդ կետի պահանջներին, մասնավորապես 2,5 տարի և ավելի պիտանելիության ժամկետ ունեցող դեղերը հանձնման պահին պետք է ունենան առնվազն 2 տարի մնացորդային ժամկետ /ա ենթակետ/, իսկ մինչև 2,5 տարի պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքերը՝ առնվազան պիտանելիության ժամկետի 2/3-ը /բ ենթակետ/:

- Մատակարարման ժամանակ անհրաժեշտ է ներկայացնել մատակարարված ապրանքատեսակների խմբաքանակի որակի սերտիֆիկատ:

Նույն արձանագրությամբ, հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետը, հանձնաժողովը 22.12.2017թ. ժամը 11:35-ին կայացած նիստում որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 26.12.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 5 արձանագրության 1-ին կետի 1.2 ենթակետով կայացված որոշմամբ, հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը, մերժել է «Թեոֆարմա» ՍՊԸ-ի հայտը, այն հիմնավորմամբ, որ վերջինիս կողմից սահմանված ժամկետում և կարգով չեն շտկվել առկա անհամապատասխանությունները:

Ամփոփելով վերոգրյալ փաստերը, Խորհուրդն արձանագրում է, որ Ընթացակարգի Տեխնիկական բնութագրով սահմանված է «Հեղուկ շնչառական, 100%, 100մլ ապակե շիկ», մինչդեռ «Թեոֆարմա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հավելված 6.1-ի «Տեխնիկական

բնութագրերը» սյունակում նշված է «Հեղուկ շնչառման 99.9%, 100մլ ապակե շշիկ», որը չի համապատասխանում Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի պահանջին:

Ընթացակարգի հրավերի Մաս I-ի 8-րդ կետի 8.20-րդ ենթակետի 2-րդ պարբերության համաձայն՝ Սույն հրավերի 1-ին մասի 8.17 կետով նախատեսված որակավորման պահանջները հիմնավորող փաստաթղթերը գնահատելու նպատակով հրավիրվող նիստում առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված, ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված, որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի և (կամ) ապրանքի ամբողջական նկարագրի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում ծանուցմանը պարտադիր կցվում է հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը, որում պարտադիր և մանրամասն պետք է նկարագրված լինեն գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները, ներառյալ ապրանքի ամբողջական նկարագրի վերաբերյալ:

Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և Նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակցի է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Այսպիսով Խորհուրդն արձանագրում է, որ «Թեոֆարմա» ՍՊԸ-ի կողմից Կարգի 47-րդ կետով սահմանված կարգով և ժամկետում չի շտկվել և գնահատող հանձնաժողովին ներկայացվել արձանագրված անհամապատասխանությունը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Նման պայմաններում Խորհուրդը գտնում է, որ սույն մասով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մերժելով «Թեոֆարմա» ՍՊԸ-ի հայտը գործել է իրավաչափ, քանի որ

վերջինիս կողմից 20-րդ չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքը չի համապատասխանում Ընթացակարգի հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին:

Իսկ ինչ վերաբերում է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված երկրորդ անհամապատասխանությանը, այն է՝ Մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում «Հավելված 6.1» ներառված չեն Ընթացակարգի հրավեի տեխնիկական բնութագրի «Ծանոթություն» մասով սահմանված դրույթները, ապա սույն մասով Խորհուրդն արձանագրում է, Ընթացակարգի հրավերով սահմանված չէ, որ տեխնիկական բնութագրի «Ծանոթություն» մասով սահմանված դրույթները հանդիսանում են պարտադիր պայմաններ և պետք է ներառվեն մասնակցի կողմից ներկայացվող 6.1 հավելվածում, ուստի Խորհուրդը գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը սույն մասով արձանագրելով անհամապատասխանություն գործել է ոչ իրավաչափ:

Ինչ վերաբերում է բողոքաբերի բողոքով ներկայացված այն դիտարկմանը, որ նման ձևով կազմելով Ընթացակարգի թիվ 20-րդ չափաբաժնի գնման առարկայի բնութագիրը՝ Պատվիրատուն գնումների գործընթացում թույլ է տվել մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացում, ինչը հակասում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով սահմանված պահանջին, ապա սույն մասով Խորհուրդն արձանագրում է, որ Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Հետևաբար, Խորհուրդը գտնում է, որ «Թեոֆարմա» ՍՊԸ-ի բողոքը հիմնավոր չէ և ենթակա չէ բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Թեոֆարմա» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 09.01.2018թ.
ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական
կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝



ՄԿԵՐ ԱՆԱՆՅԱՆ